— Հա՛, սիրելիս, նրա հետ պէտք է այսպէս լինել, — պատասխանեց Մարօն փոքր-ինչ հանգստանալով: — Ես չեմ ասում նա վատ տղայ է. նա վատ է միայն վատերի հետ, ով որ նրան հակառակ է: Բայց նրա քարէ սիրտը յանկարծ փափկանում է, երբ մի խեղճ մարդ է տեսնում. քանի՛ անգամ ես տեսել եմ նրան, որ մտել է աղքատ գիւղացիների խրճիթը եւ նրանց փող է բախշել. նա իր բերանի պատառը ուրիշին է տալիս, երբ տեսնում է, որ նա քաղցած է:

— Բայց Ասլանը եւ Սագօն ինչպէ՞ս են:

— Ասլանը լաւ տղայ է, բայց Սագօյին չեմ սիրում, նա լաւ տղայ չէ՛: Գիտե՞ս, Ֆարհատ, մի օր նա ի՞նչ ասաց ինձ. մեր բակումը նրա հետ մենակ կանգնած էինք. խօսում էինք մեր գիւղի աղջիկների վրայ. մէկ էլ տեսնեմ, այն աղոէսը. — ախար նրա երեսը աղոէսի նման է, — հա՛, Սագօն ձեռքը գցեց իմ վզովը ու ասաց. «թո՛ղ Մարօ, պաչ անեմ քեզ»: Ես հետ քաշուեցայ, մի լաւ ապտակ՝ շըրըխկ նրա երեսին. քիչ էր մնացել խեղճի շիլ աչքերը քոռանային:

— Իսկ եթէ ես ասեմ՝ ինձ մի պաչ տու՛ր, ի՞նձ էլ ապտակ կը տաս:

Նա սկսեց ծիծաղել եւ ոչինչ չպատասխանեց:

Ես գլուխս խոնարհեցրի նրա կուրծքի վրայ, երկար մեր շրթունքները չէին հեռանում միմեանցից: Մենք ոչինչ չուխտեցինք մէկ-մէկու հետ. մենք չխոստացանք միմեանց մշտական սէր, հաւատարմութիւն. — այսպիսի բացատրութիւններ չեղան մեր մէջ: Միայն սրտի խուլ լեզուն խոստացաւ շատ եւ շատ, այն, որ ամենասրբազանն է եւ աստուածային, այն, որ միայն սիրտը կարող է հասկանալ:

— Գնանք, — ձայն տուեց օրիորդը, որպէս թէ զարթնելով խորին հոգեղմայլութիւնից:

— Գիշերի ո՞ր ժամանակն է, — հարցրի ես:

Նա նայեց դէպի երկինքը եւ պատասխանեց.

— Տե՛ս, «բազումքը» երբ այն աստղի մօտ է հասնում, գիշերը կէս է լինում: Ուղիղ կէսգիշեր է: — Մենք վեր կացանք:

Մենք գնում էինք զանազան ոլոր-մոլոր ճանապարհներով. թէ ինչպէ՞ս էի անցել ես այդ լաբիրինթոսը, ամենեւին չէի յիշում: Ի՞նչ կը լինէր իմ վախճանը, մտածում էի ես, եթէ Մարօն ինձ չգտնէր. ես ոչ միայն գիշերով, այլ լոյս ցերեկով եւս չէի կարող գտնել Հասօի ագարակը:

Մարօն կպած էր իմ կողքին, եւ մանկահասակ աղջկայ դալար եւ թեքուն հասակի ամէն մի շարժմունքը էլեկտրապէս ազդում էր իմ վրայ: Բոլոր ժամանակը նա առանց լռելու խօսում էր, թռչելով մէկ մտքից դէպի միւսը.